

– Այդ... քանի մը օրուան մէջ կարելի չէ. պէտք է որ կայսրը բռնայ Փիլակրիոսի յորդորները: Դու եթէ կ'ուզես՝ սպասէ, մինչեւ Յարմար առիթը հասնի...

– Ո՞վ կրնայ երաշխաւորել թէ յարմար առիթ չհասած անյարմար առիթներ չեն հասնիր այս անիծեալ քաղքիս մէջ, նոյնպիսի առիթներ, որ Վարազտիրոցի հետ զիս նաեւ առնուն օւկիանոսի կղզի մը չի նետեն, քաղաք մը, ուր մատնութիւն, զրպարտութիւն, շոգմոգութիւն սովորական բաներ են: Ի բաց թողունք, որ քու այդ երիտասարդ կայսրը այնպիսի նայուածք մը ունի եւ այնպիսի կերպարանք, որ ինձ ամենեւին վստահութիւն չի տար: Երբ այդ կայսրդ «Վաղենտինի գլուխը, հիմա, հիմա» կ'ըսեր՝ ես վատութեան չափ անգթութիւն կը նշմարէի: Դու եթէ կ'ուզես հայրենեաց եւ բարեկամաց ծառայել՝ հնարք գտիր Վարազտիրոց ազատելու:

– Կ'ուզես ըսել փախցնելու, բայց այդ նաեւ դիրին չէ, վասնզի այս վայրկենիս՝ հիմա շատ խստութիւն կայ մայրաքաղաքիս մտնող ելնողներուն համար, եւ Վարազտիրոցի պէս ահագին եւ նշանաւոր մարդ փախցնելն դիրին բան չէ, բայց վերջապէս հնարքը կը գտնուի: Իսկ դու իրաւունք ունիս չի վստահանալու քաղքիս եւ եթէ կ'ուզես ինձ լսել մի՛ կենար եւ ժամ առաջ դարձիր հայրենիք, քանի որ հրաման ունիս:

– Ուրեմն որոշենք.— Ռշտունեաց Տերը թո՛ղ երթայ, եւ դու կը խոստանաս հնարքով զիս հեռացնել:

– Այդ իմ պարտքս է,— պատասխանեց Երիզագին:

Եւ ութ-տասն օր վերջը Թեոդորոս Ռշտունի կը մտնէր նաւ երթալու Տրապզոն: Անյաջող քամիներ, որ զինք կարգելուին՝ կ'օգնէին իւր թշնամուոյն Թումայի, որ թեպէտ յաջողութեամբ կը հասներ կայսերական քաղաքը, բայց անյաջող ընդունելութիւն կը գտներ Վաղենտինոսի կողմակից համարուելով, եւ իւր քոյրը Անկելինայ նաեւ կորուսէր Եր իւր ազդեցութիւնը, վասնզի դեռահասակ կայսրը կասկածոտ՝ հագիւ թէ Փիլակրիոսի խորհրդոց ուշ կը դներ: Փիլակրիոս եւս իւր կողմէն Երիզագուոյն ազդեցութիւնէն ազատելու համար Թումայի տեղ զնայ Յայաստանի յունական զօրաց սպարապետն անուանել տուաւ: Այնպէս որ Վարազտիրոց մնաց մայրաքաղաքն իւր գլխաւոր պաշտպանը կորսնցնելով:

Ան ատեն Վարազտիրոց փոխեց կեանքին ձեւը, մեծ եւ փառաւոր պալատ մը վարձեց ու զարդարեց, տուաւ զինք ուրախութեան եւ գիներբուաց, Բագրատունեաց սեփական խնայողութիւնն անհետ եղաւ, հանդէսք եւ խնջոյք